Regional Center for Democracy and Security

Պատերազմի նոր դեմքը. ռուս-ուկրաինական հակամարտության դասերը Հայաստանի համար

Հեղինակ՝ Էդուարդ Առաքելյան

2025

Նախաբան

Ժամանակակից պատերազմն այլևս սահմանափակված չէ ավանդական շրջանակներով: Այսօր այն ներկայացնում է բարդ համակարգ, որտեղ ռազմական գործողությունները ռազմաճակատում սերտորեն փոխկապակցված են կիբերպատերազմի, տեղեկատվական գործողությունների և տնտեսական առճակատման հետ:

Ռուս-ուկրաինական պատերազմը ցույց է տվել, որ նույնիսկ 21-րդ դարում պետությունները կարող են հյուծման պատերազմներ մղել, որտեղ առանցքային ռեսուրսը ոչ միայն սպառազինությունն է: Այն նաև շրջադարձային է դարձել՝ ցույց տալով, որ նույնիսկ զգալի թվային գերազանցություն ունեցող պետությունները կարող են խոցելի լինել՝ ադապտացվող և տեխնոլոգիապես հմուտ հակառակորդի դիմակայելիս: Այս հակամարտությունը կասկածի տակ է դրել հնացած դոկտրինները՝ ապացուցելով, որ դիմակայունությունը որոշվում է ոչ միայն ռազմական հզորությամբ, այլև նորարարության կարողությամբ:

Անօդաչու թռչող սարքերը դարձել են ժամանակակից մարտադաշտի կարևորագույն տարրը: Կառավարման ապակենտրոնացումը և փոքր խմբերի մարտավարությունը նորմա են դառնում, ճիշտ այնպես, ինչպես այն հանգամանքը, որ հասարակությունը ևս կարող է պաշտպանության հիմնական բաղադրիչներից լինել:

Տեխնոլոգիական հետամնացությունը, ինչպես նաև հասարակությանը մոբիլիզացնելու և բանակը բարեփոխելու անկարողությունը կարող են հանգեցնել ծանր հետևանքների:

Ժամանակակից հակամարտությունները պահանջում են համակարգային մոտեցում. բանակի բարեփոխումներից և մոբիլիզացիոն ներուժի ամրապնդումից մինչև ռազմարդյունաբերության զարգացում և նոր տեխնոլոգիաների ինտեգրում՝ անօդաչու թռչող սարքերից և կիբերգործիքներից մինչև զորքերի ավտոմատացված կառավարման համակարգեր:

Ռուս-ուկրաինական պատերազմը փոխել է ժամանակակից հակամարտության բնույթը և կասկածի տակ դրել պաշտպանության ավանդական մոտեցումների արդյունավետությունը:

Հայաստանի համար, որը կրել է մի շարք ցավոտ պարտություններ և գտնվում է խոցելի ռազմավարական դիրքում, այս պատերազմը և՛ դաս է, և՛ զգուշացում: 2020 և 2023 թվականների փորձը ցույց է տվել, որ Հայաստանը արդեն այս նոր իրականության մասն է:

1. Տոտալ պատերազմի վերադարձը

Ուկրաինայում ընթացող հակամարտությունը փարատել է այն պատկերացումը, թե ժամանակակից պատերազմները սահմանափակվում են հիբրիդային կամ տեղայնացված գործողություններով: Մենք տեսնում ենք դասական տոտալ պատերազմի վերադարձը, որտեղ ներգրավված են պետության բոլոր ռեսուրսները՝ բանակը, տնտեսությունը, հասարակությունը, դիվանագիտությունը և տեղեկատվական տարածությունը:

Սա ոչ միայն ռազմաճակատային հակամարտություն է, այլև ռեսուրսների, տեխնոլոգիաների վերահսկման, դաշնակիցների մոբիլիզացման և թիկունքի դիմացկունության պատերազմ:

Ռուսաստանը պատերազմի սկզբնական փուլում հույս էր դնում կայծակնային հաղթանակի վրա, սակայն ուկրաինական դիմադրությունը այն վերածեց ձգձգված և լայնամասշտաբ պատերազմի, որը պահանջում է պետական բոլոր ռեսուրսների և արտաքին օգնության շարունակական ներգրավում: Տոտալ պատերազմը միշտ հենվում է դաշինքների համակարգի վրա: Գործընկերների աջակցությունը հնարավորություն է տալիս ստանալ սպառազինություն, տեխնոլոգիաներ, ֆինանսավորում և դիվանագիտական ռեսուրսներ, առանց որոնց նույնիսկ ուժեղ պետությունը կարող է կանգնել հյուծման վտանգի առաջ:

Հիմնական դասը կարճատև պատերազմի պատրանքից հրաժարվելն է: Նույնիսկ սահմանափակ առճակատումը կարող է վերաճել ձգձգվող հակամարտության: Արագ լուծման կամ արտաքին օգնության վրա հույս դնելը կարող է աղետալի լինել:

Երկիրը պետք է պատրաստ լինի երկար, բազմաշերտ պատերազմի, ոչ միայն ռազմաճակատում, այլև տնտեսության, կիբերտարածության, դիվանագիտության և թիկունքային ոլորտներում:

Ուկրաինայի փորձը ցույց է տվել, որ առանց դաշինքների համակարգի նույնիսկ լավ կազմակերպված դիմադրությունը կարող է ջախջախվել: Փոքր և միջին պետությունների համար հուսալի դաշնակիցներ ունենալը անհրաժեշտություն և գոյատևման պայման է ընդհանուր պատերազմում:

2. 21-րդ դարի օդային պատերազմը. հարձակումն ընդդեմ պաշտպանության

Ռուս-ուկրաինական պատերազմի, ինչպես նաև վերջին իսրայելա-իրանական հակամարտության հիմնական դասերից մեկը օդային հարձակողական և օդային պաշտպանական կարողությունների հավասարակշռության փոփոխությունն է:

Ժամանակակից պատերազմը ցույց է տալիս, որ բարձր ճշգրտության հրթիռների և անօդաչու թռչող սարքերի զանգվածային կիրառման պայմաններում նույնիսկ ամենաառաջադեմ հակաօդային պաշտպանության համակարգերը կարող են կորցնել հարձակումներն արդյունավետորեն հետ մղելու իրենց կարողությունը:

Օդային հարվածներից պաշտպանությունը լավագույն դեպքում մնում է մասնակի:

Հարձակվողը առավելություն ունի: Սա ոչ միայն մատնանշում է հակաօդային պաշտպանության համակարգերի տեխնոլոգիական հետամնացությունը հարձակողական համակարգերից, այլև պատերազմի հիմնարար վերափոխումը:

Էժան ԱԹՍ-ների, հետախուզական-հարվածային անօդաչուների, բալիստիկ հրթիռների և պարեկող զինամթերքի զանգվածային կիրառումը, որոնք արձակվում են ալիքներով և բազմաթիվ ուղղություններով, ծանրաբեռնում են հակաօդային պաշտպանության համակարգերը:

Նույնիսկ որոշ օդային սպառնալիքների արդյունավետ չեզոքացման դեպքում տնտեսական հարաբերակցությունը մնում է հարձակվողի օգտին. զեզոքացման արժեքը զգալիորեն գերազանցում է հարձակվող միջոցների արժեքը:

Ավանդաբար հակաօդային պաշտպանությունը բարձր է գնահատվել որպես վահան գերազանցող թշնամու ուժի դեմ: Սակայն ժամանակակից հակամարտությունները ցույց են տալիս, որ նույնիսկ ամենաառաջադեմ հակաօդային պաշտպանության համակարգերը չեն երաշխավորում պաշտպանություն զանգվածային և համակցված օդային հարվածներից:

Պետք է հրաժարվել այն պատրանքից, որ ռադարների և մի քանի զենիթահրթիռային համակարգերի գնումը կլուծի օդային սպառնալիքների խնդիրը: Պետք է կենտրոնանալ հարձակողական զսպման վրա:

Անհրաժեշտ է համապարփակ դոկտրին, որը համատեղում է պասիվ և ակտիվ միջոցները, քողարկումը, ցրումը և հարմարվողականությունը: Հարձակողական զենքերի պաշարները կարող են շատ ավելի մեծ արժեք ունենալ, քան պաշտպանական համակարգերը, որոնք թանկ և անարդյունավետ են:

Անհրաժեշտ է ներդրումներ կատարել տարբեր դասերի անօդաչու թռչող սարքերի, բալիստիկ և թևավոր հրթիռների մեջ, որոնք կարող են դառնալ զսպման համակարգի մաս:

3. Մոբիլիզացիա և տարածքային պաշտպանություն

Ռուս-ուկրաինական պատերազմը ցույց է տվել, որ դիմակայունությունը մեծապես պայմանավորված է բնակչությանը արագ մոբիլիզացնելու և արդյունավետ տարածքային պաշտպանություն կազմակերպելու կարողությամբ:

Երկու կողմերն էլ ակտիվորեն օգտագործում են օտարերկրյա ռեսուրսներ՝ կորուստները համալրելու և մարտական պատրաստվածությունը բարձրացնելու համար:

Ռուսաստանը ներգրավել է վարձկաններ՝ հիմնականում Ասիայից և Աֆրիկայից, և նաև ռազմական աջակցություն է ստանում Հյուսիսային Կորեայից:

Հաստատված տեղեկությունների համաձայն՝ Հյուսիսային Կորեայի բանակի կանոնավոր ստորաբաժանումները մասնակցել են Ուկրաինայի դեմ մարտերին:

Ուկրաինան կամավորներ է ներգրավում աշխարհի տարբեր ծայրերից, որոնք ծառայում են Միջազգային լեգեոնում:

Ուկրաինացի զինվորները վերապատրաստվում են ՆԱՏՕ-ի բանակներում, իսկ եվրոպական երկրների հրահանգիչներն օգնում են նրանց տիրապետել նոր սպառազինությանը և ժամանակակից մարտավարական սխեմաներին, ինչը գործոն է դարձել Ուկրաինայի զինված ուժերի արդյունավետության բարձրացման համար:

Ընդհանուր առմամբ, Ուկրաինայում պատերազմը բացահայտել է մոբիլիզացիայի և տարածքային պաշտպանության թե՛ ուժեղ, թե՛ թույլ կողմերը՝ արժեքավոր փորձ տրամադրելով երկու կողմերին:

2022 թվականին Ռուսաստանը հայտարարեց մասնակի մոբիլիզացիա, որն առաջացրեց հանրային լարվածության կտրուկ աճ և քաղաքացիների արտահոսք արտասահման:

Իշխանությունները շարունակեցին զորակոչը և մոբիլիզացիան՝ մասնակի մոբիլիզացիայի քողի տակ՝ խստացնելով օրենսդրությունը և ստեղծելով էլեկտրոնային զորակոչի ռեգիստր: Ուկրաինան լայնամասշտաբ մոբիլիզացիա է իրականացնում ներխուժման սկզբից ի վեր:

Նրա զինված ուժերի չափը մեծացել է, և զինվորականների զորակոչը շարունակվում է: Այնուամենայնիվ, Ուկրաինան դեռ բախվում է անձնակազմի լուրջ պակասի, և մոբիլիզացիոն համակարգի բարեփոխումները թերի են: Ի հեճուկս բաց քննարկումներին և համակարգը բարելավելու միջոցառումներին՝ գործընթացը մնում է դանդաղ:

Ուկրաինական բանակի ամենասուր խնդիրներից մեկը շարունակական պատերազմի պայմաններում դարձել է դասալքությունը և զորամասերի ինքնակամ լքելը:

Դրա մասին է վկայում նաև զորամասն ինքնակամ լքելու և դասալքության հոդվածներով քրեական գործերի կտրուկ աճը, ինչը արտացոլում է կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի լուրջ ճգնաժամ զինված ուժերում:

Աճը հատկապես նկատելի է 2024-2025 թվականներին: Միայն 2025 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում գրանցվել է գրեթե կրկնակի ավելի շատ դեպք (110,511 քրեական գործ), քան ամբողջ 2024 թվականին (67,840):

Ընդհանուր առմամբ, ՌԴ լայնածավալ ներխուժման սկզբից մինչև 2025 թվականի հուլիսը Ուկրաինայում գրանցվել է 185,339 քրեական վարույթ՝ զորամասն ինքնակամ լքելու, և 50,058՝ դասալքության համար:

Պատճառները կարող են լինել համալիր՝ երկարատև մարտական գործողություններից հոգնածություն, ռոտացիայի բացակայություն, ծանր ծառայողական պայմաններ, հոգեբանական խնդիրներ:

Այս երևույթի զանգվածային բնույթը խաթարում է բանակի մարտունակությունը և լրացուցիչ մարտահրավերներ է ստեղծում մոբիլիզացիոն համակարգի համար:

Իրավիճակը ավելի բարենպաստ է Ուկրաինայի տարածքային պաշտպանության գումարտակների պարագայում: Տարածքային պաշտպանության տեղական ուժերի (ՏՊՈ) ստեղծումը դիմակայունության հիմնական գործոնն է:

Ուկրաինայի ՏՊՈ-ն կարևոր դեր է խաղում երկրի պաշտպանության գործում: Այն ներառում է քաղաքացիական բնակչության պատրաստումը և կազմակերպումը:

Կամավորները և հայրենասիրական կազմակերպությունները կենսական ռեսուրս են դարձել՝ ստեղծելով նոր ստորաբաժանումներ, ապահովելով թիկունքային աջակցություն և ամրապնդելով կապը ռազմաճակատի և հասարակության միջև:

Տարածքային գումարտակները, որոնք ծանոթ են իրենց տեղանքին, պաշտպանել են ենթակառուցվածքները, պահպանել բնակավայրերը, հետախուզություն իրականացրել, ոչնչացրել թշնամու զրահատեխնիկայի շարասյուները և չեզոքացրել դիվերսիոն խմբերը՝ այդպիսով աջակցելով կանոնավոր բանակին:

Քաղաքացիների մասնակցությունը պաշտպանությանը բարձրացնում է մարտական ոգին, նվազեցնում խուճապը և ամրապնդում ազգային միասնությունը:

Ռուսաստանում նույնպես գոյություն ունեն տարածքային պաշտպանության ստորաբաժանումներ, սակայն հակամարտությունում դրանց դերը պակաս նկատելի է:

Հայաստանի համար մոբիլիզացիայի և ՏՊՈւ-ի փորձը արդիական է, քանի որ անհրաժեշտ է ստեղծել կոնկրետ շրջաններին կցված պաշտպանություն, ինտեգրել կամավորներին և ապահովել նրանց պատրաստումը: Ռեզերվիստների հաշվառման ժամանակակից թվային համակարգը, կանոնավոր զորավարժությունները, տեխնիկական սարքավորումները և բանակի հետ փոխգործակցության հստակ սցենարները պետք է դառնան երկարաժամկետ ռազմավարության մաս:

Բացի այդ, կարևոր է կազմակերպել քաղաքացիական պաշտպանությունը, ներառյալ հանրության մարզումը, ահազանգման համակարգերը, տարհանումը և առաջին օգնությունը: Կամավորներին խրախուսելը սոցիալական երաշխիքների միջոցով պետք է դառնա պաշտպանական նոր մշակույթի տարր:

Հայաստանում «Պաշտպանության մասին» օրենքում ընդունվել են փոփոխություններ՝ տարածքային պաշտպանության համակարգ ստեղծելու համար, որոնք նաև սահմանում են ՏՊՈւ ստորաբաժանումների նպատակները և խնդիրները՝ ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների և միավորումների հետ համակարգմամբ:

Սակայն դեռ պարզ չէ, թե ինչպես է իրականացվում տարածքային պաշտպանության համակարգի ստեղծման ծրագիրը:

4. Մոբիլիզացիա և տարածքային պաշտպանություն

Ուկրաինայում պատերազմը ցույց է տալիս, որ ստեղծարարության, արագ ադապտացիայի, հինն ու նորը համատեղելու կարողության և մոբիլ լուծումների առավելագույն կիրառումը կարող է մարտավարական առավելություն ապահովել՝ նույնիսկ սահմանափակ ռեսուրսների դեպքում:

Մարտական պատրաստվածության և նախաձեռնողականության պահպանումը կախված է ոչ միայն զորքի և տեխնիկայի քանակից, այլև մարտադաշտում հնարամտություն ցուցաբերելու ունակությունից: Ժամանակակից պատերազմները այլևս միայն հետևակի և տեխնիկայի բախումներ չեն:

Անօդաչու թռչող սարքերի զանգվածային կիրառումը արմատապես փոխում է մարտավարությունը, հետախուզությունը և կրակային հզորությունը:

Ուկրաինան դարձել է այս գործընթացի իրական լաբորատորիա՝ ցույց տալով, թե ինչպես են անօդաչուները ազդում ժամանակակից մարտերի վրա: Դրանք իրական ժամանակում հետախուզություն են ապահովում՝ արագ բացահայտելով թիրախները և թույլ տալով բարձր ճշգրտության կրակի շտկում:

Կոմերցիոն անօդաչու սարքերը կարող են հեշտությամբ վերափոխվել մարտական առաքելությունների համար՝ հնարավորություն տալով իրականացնել ճշտգրիտ հարձակումներ:

Անօդաչուները դարձել են զանգվածային արտադրության և մատչելի գործիք, որը կարող է օգտագործվել փոքր ստորաբաժանումների մակարդակում՝ զգալիորեն մեծացնելով նրանց մարտական ներուժը:

Ուկրաինան, իսկ հետո նաև Ռուսաստանը, սկսեցին կենտրոնանալ մանևրելու ընդունակ փոքր հարթակների վրա. կոմերցիոն և FPV անօդաչու սարքերի վերափոխումը հարվածների և հետախուզության համար:

Երկու կողմերն էլ ակտիվորեն օգտագործում են խցանումներին դիմացկուն անօդաչու սարքեր՝ օպտիկամանրաթելային կառավարմամբ, որոնք բարձրացնում են հարվածների ճշտգրտությունը և մեծացնում դրանց հեռահարությունը:

Միևնույն ժամանակ զարգանում են ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) և անօդաչու սարքերի դեմ պայքարի համակարգերը՝ ստեղծելով մշտական տեխնոլոգիական մրցակցություն: Ուկրաինան և Ռուսաստանը ակտիվորեն պատրաստում են անօդաչու սարքերի օպերատորներին, ինչպես զինվորականների, այնպես էլ կամավորների և քաղաքացիական անձանց շրջանում՝ մեծացնելով դրանց արդյունավետ օգտագործման կարողությունը:

Երկու կողմերն էլ ակտիվորեն հարմարեցնում են իրենց կարողությունները ինտենսիվ հակամարտությանը, օգտագործելով ոչ ավանդական մոտեցումներ և իմպրովիզացիա, որտեղ հիմնական տարրեր են դարձել «բութ» զինամթերքի վերածումը կառավարվողի, ցամաքային ռոբոտացված հարթակները, ծովային դրոնները, տեխնիկայի և լոգիստիկայի հարմարեցումը, ինչպես նաև տեղեկատվական և կիբերգործողությունները:

Որպես նորարարության համակարգման օրինակ կարելի է առանձնացնել ուկրաինական պաշտպանական-տեխնոլոգիական կլաստերը՝ Brave1-ը:

«Վճռական նորարարություններ. Ուկրաինայի հաջորդ քայլերը տեխնոլոգիական պատերազմում» նախաձեռնության շրջանակում այն դրամաշնորհային մրցույթներ է անցկացնում՝ առաջնահերթություն տալով պայթուցիկ նյութերի արտադրությանը և մարտավարական բալիստիկ հրթիռների, ինչպես նաև զենիթահրթիռային համակարգերի մշակմանը՝ անօդաչու սարքերի դեմ պայքարելու համար:

Հատուկ ուշադրություն է դարձվում արհեստական բանականության (ԱԲ) վրա հիմնված համակարգերին: Նման նախագծերի հիմնական նպատակը ռազմաճակատի ընթացիկ կարիքներին աջակցելն ու երկարաժամկետ տեխնոլոգիական գերազանցություն ապահովելն է: Ստեղծարարությունը նաև ակնհայտ է կիբեր և տեղեկատվական գործողությունների ոլորտում: Ուկրաինան ակտիվորեն օգտագործում է OSINT (Բաց աղբյուրներից հետախուզություն):

Պատերազմի սկզբից հետո Ուկրաինայում մի շարք նոր OSINT նախագծեր են առաջացել, որոնք արձանագրում են ռուսական զորքերի գտնվելու վայրերը և տեղաշարժերը: Ուկրաինական կիբերստորաբաժանումները հասարակությանը մոբիլիզացնելու համար օգտագործում են նաև սոցիալական մեդիան:

Ռուսաստանը նույնպես օգտագործում է OSINT մեթոդներ՝ կենտրոնանալով համակարգային կիբերհարձակումների և դիփֆեյքերի ու ապատեղեկատվության տարածման վրա Telegram ալիքների և պաշտոնական լրատվամիջոցների միջոցով՝ պատերազմի և միջազգային ընկալումների վրա ազդելու համար:

5. Նորարարություններ մարտադաշտում

Մարտադաշտում նորարարությունների որոշ օրինակներ ցույց են տալիս երկու կողմերի կարողությունը՝ հարմարվելու տեխնոլոգիական պատերազմի մարտահրավերներին:

Ուկրաինական կողմը իր դաշնակիցների օգնությամբ մշակել և սկսել է Magura V5 ծովային կամիկաձե դրոնների զանգվածային արտադրությունը, որոնք փոխել են պատերազմի բնույթը ծովում և թույլ տվել անհամաչափ հարվածներ հասցնել ռուսական նավատորմին:

ՀՕՊ ոլորտում մեկնարկ տրվեց Franken-SAM նախաձեռնությանը. արևմտյան հրթիռները խորհրդային արձակման կայաններին ինտեգրելու ծրագիր, որն օգնում է փոխհատուցել զինամթերքի պակասը և արդյունավետորեն օգտագործել առկա համակարգերը:

Ուկրաինան նաև վերափոխում է խորհրդային արտադրության ինքնաթիռները՝ ՆԱՏՕ-ի սպառազինություն կիրառելու համար, օգտագործում է շարժական հրամանատարական կետեր, բեռնատարների վրա տեղադրում է հրթիռային արձակման կայաններ, ինքնագնաց հաուբիցներին ավելացնում է պաշտպանական կառույցներ և կարևոր մատակարարման երթուղիներում օգտագործում է փչովի մակետներ և հակաօդային ցանցեր:

Նաև լայնորեն կիրառվում են ցամաքային դրոնային հարթակներ (UGV)**:** Դրոնները դառնում են ոչ թե պատերազմի ապագան, այլ ներկան, և հենց Ուկրաինան է բացում այդ ճանապարհը: Ի աջակցություն բոլոր տեսակի անօդաչու սարքերի երկարաժամկետ կիրառմանն ու զարգացմանը՝ Ուկրաինան 2024 թվականի սկզբին ստեղծել է Անօդաչու համակարգերի ուժեր:

Այս նոր կառույցը միավորում է դրոններն ու ռոբոտաշինությունը բոլոր զորատեսակներում՝ ստանդարտացնելով նրանց պատրաստումը և մարտադաշտում կիրառումը՝ հիմնվելով առաջնագծից ստացված արձագանքների վրա:

UGV-ները կատարում են տարբեր խնդիրներ՝ սկսած զինամթերքի առաքումից և վիրավորների տարհանումից մինչև նռնականետերով և անօդաչուների դեմ պայքարի աշտարակներով կրակ բացելը: Մոտ 40 ուկրաինական ընկերություններ ստեղծում են ավելի քան երկու հարյուր UGV մոդել, իսկ մինչև 2025 թվականը նախատեսվում է թողարկել տասնհինգ հազար միավոր:

Ամենանշանակալի մշակումներից են «Խիժակը», որը արհեստական բանականության կիրառման միջոցով պայքարում է անօդաչուների դեմ, «Լյուտը»՝ 7,62 մմ տրամաչափի գնդացիրով, և ծանր ցամաքային դրոն «Մուրախան», որը լոգիստիկ խնդիրներ է լուծում: Brave-1 ծրագրի շրջանակներում փորձարկվել է ավելի քան յոթանասուն նմուշ, որոնք ունեն ռադիոէլեկտրոնային պայքարի նկատմամբ դիմադրողականություն, իսկ Ուկրաինայի նոր Անօդաչու համակարգերի ուժերն արդեն ստանդարտացնում են դրանց կիրառումը: Այսօր ուկրաինական UGV-ները որոշ չափով փոխհատուցում են ռուսական գերակայությունը կենդանի ուժում:

Ռուսաստանը, բախվելով ուկրաինական անօդաչու սարքերի սպառնալիքին, սկսեց զանգվածաբար պաշտպանական վանդակներ տեղադրել տանկերի և այլ տեխնիկայի վրա, իսկ ավելի ուշ՝ բազմատոննանոց մետաղական «խեցի» («կրիա-տանկեր»):

Ռուսաստանը նաև թեթև բեռնատարներն է հագեցնում արձակման կայաններով և ստեղծում «խելացի» ականապատ դաշտեր, որոնք կարող են բացահայտել մոտեցող թիրախի տեսակը և պայթեցնել ըստ ծրագրավորման:

Ռուսական զորքերը, հետևելով Ուկրաինայի օրինակին, նույնպես զարգացնում են ցամաքային դրոնային համակարգեր (UGV) տարբեր խնդիրների համար:

Այդ ոլորտի նորարարություններից մեկը «Կուրյեր» ցամաքային դրոնային համակարգի տարբերակն է, որը հագեցած է լազերային սարքավորումով՝ տարբեր տեսակի ականների հեռակա ականազերծման և ոչնչացման համար:

Ռուսաստանը նաև սկսել է UMPK-կոմպլեկտների զանգվածային օգտագործումը, որոնք սովորական ազատ անկման ռումբերը վերածում են կառավարվող սավառնող ռումբերի:

Սա թույլ է տվել ռուսական ավիացիային հզոր հարվածներ հասցնել ուկրաինական դիրքերին՝ առանց մարտագծային ՀՕՊ-ի ներգրավման գոտի մտնելու և հետևակային առաջխաղացմանը աջակցելու: Ավելին, Ռուսաստանը որդեգրել է «Գերան-2» կամիկաձե անօդաչու սարքերով (իրանական Shahed-136) զանգվածային հարձակումների մարտավարությունը՝ սպառելու Ուկրաինայի թանկարժեք զենիթային հրթիռների պաշարները:

Ե՛վ Ռուսաստանը, և՛ Ուկրաինան ակտիվորեն զարգացնում են ռադիոէլեկտրոնային պայքարի գործիքները: Բազմաշերտ հակազդման համակարգ է տեղակայվել անօդաչու սարքերի և կապի միջոցների դեմ՝ հզոր բանակային մակարդակի ՌԷՊ համալիրներից մինչև առանձին դիրքեր պաշտպանող շարժական սարքեր և հակաօդային հրացաններ:

Երկու կողմերն էլ փորձեր են կատարում, համատեղելով հին մեթոդներն ու նոր տեխնոլոգիաները, բարձրացնել արդյունավետությունը և հարմարեցնել մարտական գործողությունները հակամարտության փոփոխվող լանդշաֆտին:

Հայաստանի համար սա նշանակում է ԱԹՍ-ների զանգվածային ընդունման անհրաժեշտություն՝ որպես հետախուզության և հարվածային գործիք բոլոր մակարդակներում: Կարևոր է ստեղծել FPV անօդաչու սարքերի ներքին արտադրություն, գնել ժամանակակից հետախուզական և հարվածային սարքեր և մշակել հակաօդային պաշտպանության միջոցներ՝ ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգերից մինչև ֆիզիկական ոչնչացման համակարգեր:

Կարևոր է նաև օպերատորներ պատրաստել զինվորականների, պահեստազորայինների և քաղաքացիական անձանց շրջանում:

Ավելին, ստեղծարարությունը և արագ հարմարվողականությունը պետք է դառնան ռազմական մշակույթի մաս: Փոքր պետությունները չեն կարող թույլ տալ իրենց հետ մնալ տեխնոլոգիական մրցավազքում և պետք է առավելագույնս օգտագործեն քաղաքացիական հասարակության ներուժը՝ ոչ ավանդական լուծումներ գտնելու և պաշտպանական տեխնոլոգիաներ մշակելու համար:

Ուկրաինական պատերազմի դասերը ցույց են տալիս, որ անհրաժեշտ է ադապտիվ լոգիստիկա, որը քաղաքացիական ցանցերն ու տրանսպորտը կօգտագործի ռեսուրսների արագ առաքման համար:

Չի կարելի թերագնահատել նաև ինֆորմացիոն պատերազմի և բաց աղբյուրների վրա հիմնված հետախուզության (OSINT) կարևորությունը: Բաց աղբյուրներից ստացված տվյալների օգտագործումը կարող է բարձրացնել հետախուզական տվյալների հավաքագրման որակը և իրավիճակային իրազեկվածությունը:

Ուկրաինական և ռուսական կիբերստորաբաժանումների նման, որոնք օգտագործում են սոցիալական ցանցերը հասարակության մոբիլիզացման համար, Հայաստանը կարող է թվային հարթակներն օգտագործել ապատեղեկատվությանը հակազդելու համար:

6. Մարտավարական ապակենտրոնացում և նախաձեռնողականություն

Ժամանակակից մարտերի հաջողությունը կախված է նաև ստորաբաժանումների և կրտսեր հրամանատարների՝ սեփական որոշումներ կայացնելու, արագ հարմարվելու և նախաձեռնություն ցուցաբերելու կարողությունից՝ առանց վերևից մշտական վերահսկողության:

Դինամիկ մարտում կենտրոնացված կառավարումը հաճախ չի կարողանում ժամանակին արձագանքել արագ փոփոխվող իրավիճակին: Հետևաբար, որոշումների կայացման լիազորությունների պատվիրակումը վաշտի և դասակի հրամանատարների մակարդակին թույլ է տալիս արագ օգտագործել առաջացող հնարավորությունները:

Մարտավարությունը, որտեղ հրամանատարությունը սահմանում է նպատակները, բայց չի թելադրում դրանց իրականացման մեթոդները, մեծացնում է կրտսեր հրամանատարների պատասխանատվությունը և մոտիվացիան: Ուկրաինական բանակն ակտիվորեն հարմարվում է mission command-ին (մարտական առաջադրանքների վրա հիմնված կառավարում մարտավարությանը):

Ռուսական բանակը պատմականորեն հավատարիմ է մնացել կենտրոնացված կառավարման համակարգին: Բոլոր կարևոր որոշումները կայացվում են բարձր մակարդակներում, և կրտսեր հրամանատարների դերը սահմանափակվում է հրամանների կատարմամբ:

Սակայն պատերազմի ընթացքում ռուսական բանակը ավելի ու ավելի է օգտագործում մարտավարություն, որը պահանջում է ավելի մեծ ինքնավարություն ցածր մակարդակում: Չնայած այս փոփոխություններին, ուկրաինական բանակը դեռ առավելություն ունի մանևրելու ընդունակության առումով:

Ուկրաինացի կրտսեր հրամանատարները սովորել են սեփական որոշումներ կայացնել, ինչը թույլ է տվել նրանց ավելի արագ հարմարվել թվային գերազանցություն ունեցող թշնամու դեմ պայքարում:

Թեև Ռուսաստանը ցուցաբերել է հարմարվողականություն, այն շարունակում է բախվել խնդիրների, որոնք արմատավորված են իր ավանդական ռազմական մշակույթում:

Զարգացած սերժանտական կորպուսի բացակայությունը՝ որպես ապակենտրոնացված կառավարման հիմք, և բյուրոկրատիան դանդաղեցնում են որոշումների կայացման գործընթացը:

Ռուսաստանի հարմարվողականությունը ավելի շատ արձագանք է մարտական դաժան իրողություններին, քան համակարգային բարեփոխում:

Հայաստանի համար սա նշանակում է սպաներին և սերժանտներին սեփական որոշումներ կայացնելու և առաջնորդության հմտություններ ու սթրեսային իրավիճակներում դիմացկունություն մարզելու անհրաժեշտություն:

Անհրաժեշտ է խրախուսել նախաձեռնողականությունը և պաշտպանել նրանց, ովքեր ինքնուրույն որոշումներ են կայացնում, նույնիսկ եթե երբեմն այդ որոշումների ընդունման արդյունքում սխալներ են տեղի ունենում: Բյուրոկրատիայի նվազեցումը և հաղորդակցության պարզեցումը կմեծացնեն արձագանքման արագությունը:

Գործնական քայլերը ներառում են mission command ծրագրերի իրականացում բոլոր մակարդակներում, սերժանտների համար ուսումնական կենտրոնների ստեղծում՝ շեշտը դնելով սթրեսային պայմաններում գործնական հմտությունների վրա, նախաձեռնողականության խրախուսում և հրամանատարության ու զինվորների միջև միջնորդների թվի նվազեցում:

7. Բարձր ճշգրտության սպառազինություն և անհամաչափ գործողություններ

Ռուս-ուկրաինական պատերազմում տեղի է ունենում բարձր ճշգրտության սպառազինության և անհամաչափ գործողությունների ակտիվ կիրառում:

Բարձր ճշգրտության սպառազինությունը հատուկ դեր է խաղացել՝ հնարավորություն տալով հարվածել կարևոր թիրախներին, ինչպիսիք են հրամանատարական կետերը, պահեստները, օդանավակայանները, մատակարարման գծերը և հակաօդային պաշտպանության համակարգերը:

Սա թույլ է տվել Ուկրաինային փոխհատուցել թշնամու թվային և տեխնիկական գերազանցությունը՝ ճշգրտության, շարժունակության և համակարգման միջոցով: Ենթակառուցվածքներին և կարևոր թիրախներին հարվածները դարձել են ոչ միայն ռազմական, այլև հոգեբանական ռազմավարություն:

Բարձր ճշգրտության զենքերը օգտագործվում են շարժական ստորաբաժանումների կողմից, ինչը թույլ է տալիս նրանց արագ փոխել դիրքերը և խուսափել պատասխան կրակից:

Ուկրաինան ակտիվորեն օգտագործում է հետախուզական անօդաչու սարքեր և արբանյակային տվյալներ՝ ճշգրիտ թիրախավորման համար: HIMARS շարժական հրթիռային համակարգերի փոխանցումը Կիևին շրջադարձային նշանակություն ուներ:

Դրանց ճշգրտությունն ու հեռահարությունը թույլ տվեցին Ուկրաինային ոչնչացնել զինամթերքի պահեստներ, զորքերի կուտակումներ և շտաբներ հակառակորդի թիկունքի խորքում: Սա խաթարում է ռուսական լոգիստիկան և թուլացնում նրանց հրետանու հզորությունը:

Storm Shadow և SCALP թևավոր հրթիռների հայտնվելով՝ Ուկրաինան ստացավ ռազմավարական թիրախներին, ներառյալ Սևաստոպոլում Ռուսաստանի սևծովյան նավատորմի շտաբին հարվածելու հնարավորություն:

Ռուսաստանը իր հերթին օգտագործում է հեռահար զինատեսակների լայն զինանոց, ներառյալ «Կալիբր» թևավոր հրթիռները, «Իսկանդեր» բալիստիկ հրթիռները և «Կինժալ» գերձայնային հրթիռները՝ ուկրաինական տարածքի խորքում գտնվող ռազմական և ենթակառուցվածքային թիրախներին զանգվածային հարվածներ հասցնելու համար՝ նպատակ ունենալով առավելագույն վնաս հասցնել:

Ուկրաինական ծովային դրոնները դարձել են արդյունավետ անհամաչափ գործիք ռուսական նավատորմի դեմ Սև ծովում:

Դրանց միջոցով Ուկրաինան, չունենալով մեծ նավատորմ, կարողացավ թիրախավորել ռուսաստանյան ռազմանավերը՝ ստիպելով հակառակորդին դուրս բերել դրանք ավելի անվտանգ ջրեր:

Անհամաչափ գործողությունների մեկ այլ կարևոր տարր է ուկրաինական հետախուզական ծառայությունների հատուկ գործողությունները ռուսական թիկունքում:

Դրանք ներառում են ռուսական Մի-8 ռազմական ուղղաթիռի հաջող առևանգումը, ինչպես նաև հեռահար ռմբակոծիչ ինքնաթիռների և այլ տեխնիկայի ոչնչացումը օդանավակայաններում:

Նման գործողությունները ցույց են տալիս հակառակորդին վնաս հասցնելու կարողությունը՝ օգտագործելով ոչ ավանդական մեթոդներ, ներառյալ ռազմարդյունաբերական համալիրի, գեներալների և պետական քարոզչության առանցքային դեմքերի ֆիզիկական ոչնչացումը:

Ռուսաստանը իր հերթին նույնպես գործողություններ է իրականացնում ուկրաինական ազդեցիկ գործիչներին ֆիզիկապես ոչնչացնելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ, հակամարտությունը ցույց է տալիս բարձր ճշգրտության սպառազինության և անհամաչափ գործողությունների կարևոր դերը:

Հայաստանի համար այս փորձը հատկապես կարևոր է: Թվային և ռեսուրսային անհավասարության պայմաններում շեշտը պետք է դրվի հեռահար և ճշգրիտ հարվածային կարողությունների վրա՝ ուղղորդվող զինամթերքով արդիականացված հրետանի, շարժական հակատանկային կառավարվող հրթիռային համակարգեր և մարտավարական հրթիռներ:

Անհրաժեշտ է կառուցել մարտական կառավարման թվային համակարգ, որը կինտեգրի անօդաչու սարքերը, հետախուզությունը և կրակային միջոցները:

Միևնույն ժամանակ, պետք է ստեղծվեն մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնք ունակ են անհամաչափ հարվածներ հասցնել հակառակորդի լոգիստիկային և կրիտիկական ենթակառուցվածքներին: Մարդկային ներուժի զարգացումը մեկ այլ առանցքային ոլորտ է:

Հայաստանին անհրաժեշտ են սպաներ և օպերատորներ, որոնք ունակ են համակարգել կրակը իրական ժամանակում և արդյունավետորեն օգտագործել բարձր ճշգրտության սպառազինությունը: Ժամանակակից համակարգերի, շարժական հարվածային միջոցների և վերապատրաստված մասնագետների միջոցով հնարավոր կլինի ապահովել զսպումն ավելի ուժեղ հակառակորդի դեմ:

8. Գրոհային ստորաբաժանումների և փոքր խմբերի մարտավարության զարգացում

Ուկրաինայում լայնամասշտաբ պատերազմը դարձել է պատերազմ վարելու ժամանակակից մոտեցումների փորձադաշտ: Մարտերի դինամիկան որոշող գործոններից մեկը գրոհային ստորաբաժանումների զարգացումն է և փոքր խմբերի մարտավարության լայն կիրառումը: Փոքր գրոհային խմբերը դարձել են մարտադաշտի հիմնական գործիքը: Ժամանակակից պատերազմում որոշիչ գործոնը ոչ այնքան զորքերի քանակն է, որքան փոքր, ինքնավար և պրոֆեսիոնալ պատրաստված ստորաբաժանումների տեղական հաջողության հասնելու կարողությունը:

Սա պահանջում է անձնակազմի վերապատրաստման նոր համակարգ, ճկուն հրամանատարություն և բանակի հագեցումը կապի միջոցներով, ԱԹՍ-ներով և թեթև զրահատեխնիկայով:

Հետախուզական և կրակային միջոցների բարձր հագեցվածությունը հաշվի առնելով՝ մեծ ուժերով պաշտպանությունը ճեղքելու ավանդական մեթոդները դարձել են անարդյունավետ և թանկ: Ռուսաստանը, բախվելով Ուկրաինայի կազմակերպված պաշտպանությանը, սկսեց ստեղծել մասնագիտացված գրոհային ստորաբաժանումներ:

Օրինակ է «Վագներ» խմբի «գրոհային մոդելը»: Էությունը կայանում է ինքնավար փոքր խմբերի օգտագործման մեջ, որոնք կատարում են նեղ մարտավարական խնդիրներ. հենակետերի գրավում, պաշտպանության խոցելի հատվածներ ներթափանցում և քաղաքային մարտերի վարում: Ուկրաինան իր հերթին զարգացնում է նմանատիպ փոքր խմբերի մարտավարություն պաշտպանական և հակահարձակողական գործողությունների ժամանակ:

Մոբիլ ստորաբաժանումները, որոնք հագեցած են ժամանակակից կապի միջոցներով և համակարգված են հրետանու հետ, օգտագործվել են ամրացված դիրքերը շրջանցելու, հակառակորդի հենակետերին հարձակվելու, մերձակա թիկունքում դիվերսիաներ իրականացնելու, ինչպես նաև լոգիստիկան և կապը խաթարելու համար:

Քաղաքային մարտերում ուկրաինական խմբերը կենտրոնանում են շարժունակության և անակնկալի վրա, ինչը թույլ է տալիս նրանց պահպանել նախաձեռնությունը նույնիսկ թվային գերազանցող հակառակորդի դեմ:

Այս մոտեցումը փոխհատուցում է հարձակողական կարողությունների պակասը և նվազեցնում կորուստները ճակատային հարձակումներում:

Փոքր խմբերի շարժունակությունը հնարավորություն է տալիս մանևրելու, հարձակման անսպասելի ուղղություններ ապահովելու և նվազեցնում է թշնամու հրետանու ազդեցությունը:

Հետախուզական և հարվածային անօդաչու սարքերի ակտիվ օգտագործումը մեծացնում է փոքր ստորաբաժանումների ճշգրտությունն ու մարտական արդյունավետությունը: Հայաստանի համատեքստում այս սկզբունքների կիրառումը կարող է հատկապես արդյունավետ լինել:

Լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր գրոհային խմբերը, որոնք պատրաստված են մերձամարտի համար և ունեն ինքնավար կառավարում, թույլ կտան փոխհատուցել թշնամու թվային գերազանցությունը և մեծացնել բանակի ընդհանուր մարտունակությունը:

2020 թվականին ադրբեջանական գրոհային ստորաբաժանումների հետ բախումների հայկական զինված ուժերի փորձը ցույց տվեց այդ մարտավարության արդյունավետությունը:

Ադրբեջանական ստորաբաժանումները, օգտագործելով հատուկ նշանակության մոբիլ խմբեր, արագ ներթափանցում էին հայկական պաշտպանության խորքերը՝ խաթարելով դրա կայունությունը և դժվարություններ ստեղծելով ավանդական պաշտպանության համար:

9. Ժամանակակից ամրություններ և ենթակառուցվածքների պաշտպանություն

Ռուս-ուկրաինական պատերազմը ցույց է տվել ինժեներական պաշտպանության ավանդական մեթոդների կարևորությունը՝ որպես մարտադաշտում կայունության հիմնական գործոններից մեկը: Չնայած անօդաչու սարքերի և բարձր ճշգրտության զենքերի լայն կիրառմանը, խրամատները, բլինդաժները, բետոնե թաքստոցները և էշելոնացված պաշտպանությունը կրկին ապացուցել են իրենց արդյունավետությունը: Նման կառույցները դարձել են զորքերը հրետանուց, ավիացիայից և զրահատեխնիկայից պաշտպանելու հիմքը:

Ուկրաինան և Ռուսաստանը ցույց են տվել, որ ամրությունների բազմաշերտ համակարգը կարող է խոչընդոտ դառնալ նույնիսկ լավ պատրաստված հարձակողական գործողությունների համար: Հարյուրավոր կիլոմետրեր ձգվող խրամատները և հաղորդակցման ուղիները թույլ են տալիս կազմակերպել պաշտպանություն, որը դիմացկուն է զանգվածային հարվածներին:

Ամրացվել են քաղաքները, տրանսպորտային զարկերակները, և ապահովվել է լոգիստիկայի անվտանգությունը և պահեստազորի տեղակայումը: Տեխնոլոգիական բաղադրիչը նույնպես ինտեգրվել է ամրացված գծերին. դիտարկման համակարգեր, կարճ հեռահարության ՀՕՊ և հակատանկային դիրքեր: Միևնույն ժամանակ, ինժեներական կառույցներ են կառուցվել ոչ միայն ռազմաճակատում, այլև թիկունքում, որտեղ դրանք ապահովում են հրամանատարական կետերի, պահեստների և կարևոր ենթակառուցվածքների անվտանգությունը:

Մի քանի շրջաններում ռուսական բանակը նույնպես ուժեղացրել է իր ինժեներական պաշտպանությունը՝ ստեղծելով բազմաշերտ պատնեշներ, ականապատ դաշտեր և երկարաժամկետ ամրություններ, որոնք հարթավայրերում կարող են զսպել հակառակորդին և նվազագույնի հասցնել կորուստները:

Հայաստանի համար, հաշվի առնելով աշխարհագրությունը և հնարավոր սպառնալիքները, ամրաշինական կառույցների զարգացումը պետք է առաջնահերթություն լինի:

Բաց աղբյուրների համաձայն՝ արդեն իսկ աշխատանքներ են տարվում սահմանամերձ կարևոր հատվածներում ամրություններ կառուցելու ուղղությամբ:

Ե՛վ լեռնային, և՛ հարթավայրային շրջանները պահանջում են լայնամասշտաբ ինժեներական վերազինում: Ամրությունները պետք է ծածկեն ոչ միայն սահմանները, այլև կարևոր մատակարարման ուղիները, կապի հանգույցները և թիկունքային բազաները: Էշելոնացված պաշտպանությունը, որը ինտեգրված է ՀՕՊ-ի, ՌԷՊ-ի և սենսորային համակարգերի հետ, թույլ կտա հայտնաբերել և հետ մղել անօդաչու սարքերի հարձակումները, հրետանային հարվածները և ճեղքման փորձերը:

Կարևոր է նաև ինժեներական ստորաբաժանումների ստեղծումը, որոնք ունակ են արագ կառուցել և վերականգնել ամրությունները մարտական պայմաններում:

Ամրաշինությունը մնում է պաշտպանության հիմնական տարրը, հատկապես բարձր լեռների և սահմանափակ մանևրելու ընդունակության պայմաններում:

Բաց աղբյուրների համաձայն՝ Հայաստանում արդեն իսկ լուրջ ամրաշինական աշխատանքներ են տարվում սահմանամերձ կարևոր հատվածներում:

Խոցելիությունից դեպի դիմակայունություն

Հայաստանի անվտանգային միջավայրն արմատապես փոխվել է, և երկիրն այլևս չի կարող իրեն թույլ տալ ապավինել հնացած դոկտրիններին, իրավիճակային մոբիլիզացիային կամ այն մտայնությանը, թե արտաքին դերակատարները կերաշխավորեն իր գոյատևումը: Ուկրաինայում շարունակվող պատերազմի դասերը ցույց են տալիս, որ ժամանակակից հակամարտությունը սահմանափակ մարտադաշտային երևույթ չէ, այլ «տոտալ պատերազմ», որն ընդգրկում է պետության կյանքի բոլոր ոլորտները՝ տնտեսությունը, քաղաքացիական հասարակությունը, տեխնոլոգիական կարողությունները և նույնիսկ բնակչության հոգեբանական կայունությունը:

Հայաստանի համար այս իրողությունը պահանջում է վճռականապես հրաժարվել հնացած մոտեցումներից և ունենալ հստակ երկարաժամկետ ռազմավարություն, որը կհամատեղի ռազմական բարեփոխումները, արդյունաբերական զարգացումը և հասարակության մոբիլիզացիան:

Նախ, պատրաստվածությունը պետք է սկսվի հենց բնակչությունից: Թափանցիկ մոբիլիզացիոն համակարգը, քաղաքացիական պաշտպանության հիմնական բաղադրիչների ուսուցումը և համայնքային մակարդակով պարբերական զորավարժությունները դիմակայունության նախապայմաններ են: Այս միջոցառումները ոչ միայն բարելավում են պատրաստվածությունը, այլև հանրային վստահություն են ձևավորում, որ պաշտպանությունը միայն բանակի պատասխանատվությունը չէ, այլ համընդհանուր պարտք:

Կարևոր է նաև տեղական ռազմարդյունաբերության զարգացումը: Անօդաչու թռչող սարքերը, ռադիոէլեկտրոնային պայքարի գործիքները և ճկուն տեխնոլոգիաներն են այժմ որոշում հարձակման և պաշտպանության հավասարակշռությունը:

Օգտագործելով իր ներուժը՝ Հայաստանը կարող է ստեղծել նորարարություններով զարգացող պաշտպանական էկոհամակարգ, որը կնվազեցնի արտաքին մատակարարներից կախվածությունը և զինված ուժերին կապահովի հարմարվողական, ծախսարդյունավետ կարողություններով: Անօդաչու թռչող սարքերի օպերատորների և ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագետների ուսուցման ցանցերը կերաշխավորեն, որ մարդկային կապիտալը համահունչ լինի տեխնոլոգիական կարիքներին:

Բարեփոխումները պետք է հաղթահարեն կառուցվածքային և ինստիտուցիոնալ թուլությունները: Բանակում բյուրոկրատական իներցիան և դիմադրությունը մնում են փոփոխությունների ամենամեծ խոչընդոտներից մեկը: Բարեփոխումները համակարգող անկախ մարմնի ստեղծումը, որը լիազորված կլինի շրջանցել արմատացած շահերը և ինտեգրել քաղաքացիական փորձագիտական ներուժը, կարող է անհրաժեշտ թափ հաղորդել արդիականացմանը:

Ապակենտրոնացված հրամանատարության մշակույթը, որի դեպքում կրտսեր հրամանատարները պատրաստվում են և լիազորություններ են ստանում ցուցաբերել նախաձեռնողականություն, պետք է փոխարինի կոշտ, կենտրոնացված համակարգին, որը բազմիցս իր անարդյունավետությունն է ապացուցել ժամանակակից հակամարտություններում:

Վերջապես, Հայաստանը պետք է գիտակցի, որ պաշտպանությունը անբաժանելի է ժողովրդավարությունից, թափանցիկությունից և հանրային վստահությունից: Ժամանակակից պատերազմներում հենց հասարակությունն է պաշտպանության հենասյունը, և կամավորական ցանցերը, սփյուռքի ներգրավվածությունը ու բաց հաղորդակցությունը նույնքան կարևոր են, որքան տանկերը կամ հրթիռները:

Ամփոփելով՝ Հայաստանի ճանապարհը դեպի դիմակայունություն ընկած է պաշտպանության համապարփակ մոդելի ընդունման մեջ, որն ինտեգրում է ռազմական արդիականացումը, արդյունաբերական նորարարությունները, հասարակության մասնակցությունը և ինստիտուցիոնալ բարեփոխումները:

Խոսքը կարճաժամկետ լուծումների մասին չէ, այլ սերնդափոխության ռազմավարության, որը պահանջում է տեսլական, հաստատակամություն և արմատացած սովորույթներին մարտահրավեր նետելու քաջություն: Եթե այն լրջորեն իրականացվի, Հայաստանը կարող է ներկայիս խոցելի իրավիճակից անցում կատարել դեպի դիմակայունություն, որն ի վիճակի է զսպել ագրեսիան, մոբիլիզացնել իր ժողովրդին և պահպանել երկրի ինքնիշխանությունը օրեցօր ավելի անկայուն դարձող տարածաշրջանում: